ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Նշի՛ր Գուրգեն Մահարու հնգապատումի վիպակների վերնագրերը, ի՞նչ նախահիմք ունեն դրանք, և ո՞ր վիպակն է մնացել անավարտ:

(1,5)

<u>Պատասխան</u> - ***«Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», «Ծաղկած փշալարեր»:***

Ինքնակենսագրական վիպակներ են:

Անավարտ է մնացել ***«Երիտասարդություն»*** վիպակը*:*

2.Ո՞րն է Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի ստեղծման հիմնական դրդապատճառը.

ա/սփյուռքահայերի ձուլման վտանգի ահազանգը հնչեցնելը
բ/դժբախտ սիրո պատմություն ներկայացնելը
գ/Եվրոպայում ապրող և ուսանող հայ երիտասարդների կյանքը պատկերելը
դ/հեղինակի կենսագրության մանրամասները գեղարվեստորեն վերարտադրելը:

(0,5)

<u>Պատասխան</u> - *ա/սփյուռքահայերի ձուլման վտանգի ահազանգը հնչեցնելը*

3.Ծովուն վրա կրծփար, կ՚օրորվեր, կըտատաներ, կոնակի վրա պառկած, բոլոր հասակովը ջուրին երեսը: Գերմարդ մըն էր ասիկա, մեծ-մեծ բացված, կարծես թե զարմացած աչքերով ու անթարթ, համառ նայվածքով մը դեպի երկինք՝ ուր լուսինը, իր տասնըհինգին մեջ, արծաթե կլոր ու հսկա դրամի մը պես կը փայլեր:

Հայ արձակագիրներից ո՞ւմ և ո՞ր ստեղծագործությունից է հատվածը: Բացատրիր հատվածի փոխաբերությունը նորավեպի համատեքստում:

(2,5)

<u>Պատասխան</u> – *Գ. Զոհրապ, «Ճիտին պարտքը»*

Հերոսի կյանքի իմաստը դարձել էր դրամի հայթայթումը՝ «ճիտին պարտք» դարձած «անտակ» պայուսակը սնունդով լցնելու համար: Եվ անգամ մահվան ճիրաններում հերոսի հայացքը չի դադարում դրամ փնտրել՝ դրա ցանկալի պատկերը տեսնելով տասնհինգ օրական լուսնի վրա:

4.*Ո՞ր միտքը ո՞ր հեղինակինն է.*

1.Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ:
2.Ողբերգությունները բեմից իջել են և բռնել կյանքի ասպարեզը:
3.Գրածներդ ոչ մեկ հայու կրնան խոսիլ, որքան ատեն, որ անոնց մեջ <<կարոտ>> բառը չկա…
4.Աստված փիլիսոփայությունը պարգևել է մարդկային հոգիները գեղեցկացնելու համար:

Ա.Շ. Շահնուր Գ.Հովհ. Թումանյան
Բ.Դ. Անհաղթ Դ.Կ. Զարյան

(2)

<u>Պատասխան</u> – 1. -Գ., 2.- Դ., 3.-Ա., 4.- Բ.

5.*Չարենցի <<Երկիր Նաիրի>> վեպում որո՞նք են քաղաքի <<կատարյալ հրաշալիքները>>:*

(1,5)

<u>Պատասխան</u> – *Բերդը, Վարդանի կամուրջը, Առաքելոց եկեղեցին, ձորի Սլլան քարը, Ճգնավորի մատուռը: /Առնվազն երեք ճիշտ պատասխանը լիարժեք է/:*

6. *Պատմությունների ընդհանուր տրամադրությունից ելնելով՝ լրացրու բացթողումները:*

1.Երեք ընկերներ ծանոթանում են Շիրազի հետ՝ ասելով, որ երեքի անունն էլ ***Ռազմիկ*** է:

Շիրազը զարմանում է.- Ի՞նչըդ կեղնի, բոլորդ Ռազմիկներ եք, իսկ Մասիսը ... :

2.Հրատարակչության բաժնի վարիչ Եղիշե Չարենցի աշխատասենյակ է մտնում մի գրող, թղթապանակը ձեռքին և կատակել ցանկանալով՝ ասում է.
- Մի վախեցեք, մեջը ձեռագրեր չկան:
- Բա ինչո՞ւ ես պտտեցնում այդ դատարկ թղթապանակը,-հարցնում է Չարենցը:
- Պտտեցնում եմ, որովհետև մեջը լիքը հանճարեղ մտքեր կան,- շարունակում է կատակել գրողը:
- Հանճարեղ մտքերը ...., ոչ թե դատարկ թղթապանակներում,- պատասխանում է բանաստեղծը:

(2)

<u>**Պատասխան**</u> – *1.գերի է, 2.հանճարեղ գլխում են լինում:*

7.*Հ. Շիրազի <<Բիբլիականը>> պոեմը <<ոգու կատարյալ ներդաշնակության>> հասնելու ցանկությամբ միջնադարյան ո՞ր հանճարեղ ստեղծագործությունն է հիշեցնում: Այդ ներդաշնակությանը հասնելու ի՞նչ ճանապարհներ են ընտրված երկու ստեղծագործություններում:*

(3)

<u>**Պատասխան**</u> – *«Ոգու կատարյալ ներդաշնակության» հասնելու ցանկությամբ «Բիբլիականը» հիշեցնում է Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի ընդհանուր ոգին: Նարեկացու քնարական հերոսն ինքն իրեն հաստատում է Աստծու առջև իր թերի, աղավաղված էության խոստովանությամբ և ձգտում դեպի կատարյալը: Շիրազի քնարական հերոսը այդ ուղին սկզբում որոնում է իրենից դուրս, և ապա միայն գիտակցում, որ իրենից դուրս եղածը կա այնքանով, որքանով արտացոլվում է իր գիտակցության մեջ:*

8.Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդեն ու պակսեցան անոնք ալ..
Հարյուր տարի վերջ միայն, իր այս ձևով, այս սխալ
Կամ ճիշտ ձևով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խոսեր
Էին անուշ տղաքներ, գուցե խոսող չունենա…

Ո՞ր լեզվի մասին է խոսքը և ի՞նչ պատճառներ ունի Թեքեյանի մտահոգությունը:

(2,5)

<u>Պատասխան</u>- *Խոսքը արևմտահայերենի մասին է: Թեքեյանի մտահոգության պատճառը օտարության մեջ /սփյուռքում/ հայության ուծացման , ինքնության կորստի վտանգն է:*

9.Նա գիտեր

- ջրից ոսկի ստանալու գաղտնիքը
- որ երկիրը գնդաձև է
- որ երկրի հավասարակշռությունը պահվում է երկու հավասարազոր հակադիր ուժերով :
- որ ամեն լինելիություն ենթադրում է քայքայում և ամեն քայքայման մեջ սաղմնավորում է լինելիության սակզբնավորումը
- ոչինչ չի կորչում, այլ մի տեսակից փոխակերպվում է մեկ այլնի

Ո՞ւմ մասին է խոսքը և ո՞ր դարում է գործել նա:

(2)

<u>Պատասխան-</u> *Անանիա Շիրակացին է, 7-րդ դար:*

10. **Նրանցից մեկը մասնագիտությամբ բժիշկ էր, մյուսը՝ իրավաբան: Ապրում էին միևնույն քաղաքում, ստեղծագործում էին միևնույն ոլորտում, նրանց բաժին հասավ նույն ճակատագիրը:**

Ովքե՞ր են նրանք, որտե՞ղ էին ապրում, ի՞նչ ոլորտի և ինչպիսի՞ ճակատագրի մասին է խոսքը:

(2,5)

<u>Պատասխան-</u> *Բժիշկը Ռուբեն Սևակն է, իրավաբանը՝Զոհրապը, ապրում էին Պոլսում /Կոստանդնուպոլիս/, ստեղծագործում էի գրական ոլորտում, երկուսն էլ, ցեղասպանության զոհ են:*